



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱԲԱԹ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1862

ԹԻ Ի 684

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻԱ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Իտալիոյ կառավարութիւնը, նմանապէս իտալացի ազգին խոհեմ և անձազոյն մասը կը յուսան թէ կարիպալտին յոնգուզն և զրեթէ աստամբական ընթացքը զարուսէ ետև, Գաղղիոյ կառավարութիւնը վախճան մի պիտի տայ հոռոմական խնդրոյն, իւր զօրքը Հոռոմէն ետ կանչելով:

Սակայն այս յոյսը մինչև ցայսօր ՚ի զործ գրուելու նշաններ չունենալէ ՚ի դատ, և ՚ի Գիւնի կոչուած նորահաստատ օրագիրը, որ կը հրատարակուի ի Փարիզ վերատեսչութեամբ մօտիւ աը 1 ակէրոնիէն գերակումին, ոչ միայն պարսկական աշխարհական իշխանութեան վերահաստատութիւնը կը պաշտպանէ, այլև իտալական ազգին՝ միացեալ մէկ տէրութեամբ կառավարուելու անհնարին կը համարի և Գաղղիոյ օգտիցը դէմէ կը բռնէ, հետևաբար կառավարիչ որ երբեք դաշնակից տէրութեանց յանձնուի իտալական թերակղզին, այսինքն Վիքթոր-Լամանուէլ թագաւորին, Կաթոլիկ թագաւորին և սրբազան Պապին:

Որովհետև մօտիւ աը 1 ակէրոնիէն գերակումը ձերակուտի անդամ է և մտերիմ յարաբերութիւններ ունի Կաթոլիկոն կայսեր հետ, հասարակութիւն թէ իրաւամբ և թէ յանիրաւի, կը կարծէ թէ կայսերական մտածութիւններն են յիշեալ օրագրութեան հրատարակածները, և այս պատճառաւ մեծ տղաւորութիւն ըրին ազատասէր ժողովրդոց վերայ:

Այսու ամենայնիւ, տարակից չկայ թէ մօտիւ աը 1 ակէրոնիէն ըսածները մտացածին և անպորճաբեր լին անաշխարհութիւններն են, զորս մարտիկ Օթթոման Կաթոլիկ օրագիրը և Վոլոնիոյի Կաթոլիկ Օթթոման լրագրութիւնը և ուրիշ շատ լրագիրներ մեծապէս դատարարեցին:

Բաղադրուածութեան վերաբերեալ այս դաղափարները եթէ յառաջ երթալու ըլլան, Գաղղիոյ պաշտօնէից ժողովոյն անդամներէն շատերը պիտի հրաժարուին և մանաւանդ ներքին զործոց պաշտօնեայ մօտիւ աը Բէրսիլին կոմսը և արտաքին զործոց տեսուչ մօտիւ թուրքներէն, որոնք յիշեալ դաղափարաց հակառակ են:

Ինչհանրապէս կը կարծուի թէ վեհափառ Լոմէնի կայսրուհին է, որ իւր կուսակիցներովը կուզէ յառաջ տանիլ այս դաղափարները և համոզել ըզ-Կաթոլիկոն կայսրը, որ հաստատուն պահէ սրբազան Պապին աշխարհական իշխանութիւնը:

Կըսուի թէ Սպանիոյ թագուհին մօտերս Լոման պիտի երթայ ՚ի տեսութիւն Լոմանի թագուհւոյն, որ յայնժամ վերադարձած պիտի ըլլայ Գերմանիայէն, ուր ճանապարհորդութիւն կընէ այժմ:

Իտալիոյ մէջ նշանակութեան արժանի նոր դէպք չկան: Հասարակութիւնը անհամբերութեամբ կըստպասէ հոռոմական խնդրոյն լուծմանը, և ըստորում աղէկ գիտէ թէ Գաղղիոյ կայսրն է պատճառը այս լուծման յապաղելուն, անոր համար Կաթոլիկոն կայսեր դէմ զրդուութիւն մը կը կտեսնուի ժողովրդը գետն մէջ, որ երթալով կը ծանրանայ:

Կարիպալտին վերքը աղէկնալու վերայ են: Այս հռչակաւոր զօրապետը Սթեյնիայի ծովածոցը Սանթա-Մարիա բերդին մէջ բանտարկուած է, ուր ամեն կերպ յարգանք և խնամատարութիւն կընդունի և իւր զակիները ու ազգականները ազատաբար բերդը կը մանեն զինքը տեսնելու համար:

Թէպէտև զրոյցուեցաւ թէ ձերակուտին մէջ կամ ժամանոր ատենին մը առջև պիտի տեսնուի Կարիպալտին և իւր ընկերաց դասը, այսու ամենայնիւ

ըստ երևմանց, ոչ ձերակուտին և ոչ ուրիշ ատենին մը առջև պիտի դատուի այս զործը, այլ կը հաստատեն թէ Վիքթոր-Լամանուէլ թագաւորը՝ իւր ունեցած արքայական արտօնութեամբը, անյիշաչարութիւն և թողութիւն պիտի հրատարակէ, իւր դասերը Բիա իշխանուհւոյն ամուսնութեան բարեպատեհ ատիւնը, որ ինչպէս յայտնի է, Կորթուկալի թագաւորին հետ պիտի պսակուի մօտերս:

Կաթոլիկ իշխանը՝ ընկերութեամբ իւր լծակցին կըստպասուի ՚ի Գուրիոն, ուր ներկայ պիտի գտնուին վերոյիշեալ ամուսնութեան հանգիսին:

Ամբիկայէն հասած հետադրական լուրերը Սեպտեմբերի 10էն են ըստ նոր տուժարի: Այս լուրերուն նայելով Հարաւային զօրաբանակը՝ 50 հազար հոգիով Բոթոմաք գետը անցեր ու հիւսիսային զօրաբանակը աւերել է, որ Փօփ զօրապետին հրամանատարութեան ներքե էր: Մաք-Բլէլէն զօրապետը՝ իւր զօրաբանակովը դէպ ՚ի Վաշնիկթըն կը քալէր ՚ի պաշտպանութիւն յիշեալ մայրաքաղաքին, ուր կը բնակի հիւսիսային Միացեալ Նահանգաց կառավարութիւնը և որուն տիրելու կը ստանաւ զարաւային զօրաբանակը:

Լոմանի Կաթոլիկ և Մարիի-Բապտիստի օրագրութիւնները մէյնէ կը յօդուած կը հրատարակեն Ամբիկայի խնդրոյն վցայօք: Կաթոլիկ լրագիրը կապաղուցանէ թէ զործքերը շատ վտանգաւոր դարձուած մը ընկալան հիւսիսային դաշնակցաց համար, և չկարծեր որ այս կայսրութիւնը կարելի ըլլայ շուտով փոխուելու: Իսկ Մարիի-Բապտիստի լրագիրը կը ծանուցանէ թէ հարաւային դաշնակիցները՝ որ մինչև ցայսօր պաշտպանողական կայսրութեան մը մէջ կը գտնուէին, ըսկսան այժմ յարձակողական ընթացք մը բռնել: Այսու ամենայնիւ, կը յաւելու յիշեալ լրագիրը, հարաւային դաշնակիցները անշուշտ պիտի չլինան տիրել հիւսիսականաց, ինչպէս որ հիւսիսականները մինչև ցայսօր չկրցին տիրել հարաւայնոց:

Սակայն, ըստ հասարակաց կարծեաց, իրաց այս վիճակը պիտի փութացնէ Եւրոպայի բարեկամական միջնորդութիւնը, կարգադրելու համար այս պատակի կոնքը, որ Ամբիկայի քաղաքակրթեալը լուսաւորեալ բազմութիւ ժողովրդոց բարօրութիւնը վտանգի մէջ կը ձգէ:

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՄՊԸԿԻ

Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը տեսնելով բամպակի գնաց օրըստօրէ աւելնալու և անոր կանոնաւոր մշակութեան յառաջ գալու ընդհանուր օգտից նախատես ըլլալով, արժան համարեցաւ քաջալերական միջոցներ ՚ի գործ գնել ՚ի նպատակ յառաջագիտութե բամպակի մշակութեան բոլոր թուրքաստանի մէջ:

Իհասարակ վաճառականութեան տեսուչ վօտմափայլ Սալիֆէթ Էֆենտին պաշտօնական նամակը, զոր այս խիստ օգտակար գործոյն համար գրած է առ ընդհանուր կառավարիչն նահանգիս վօտմափայլ Վէհմէտ փաշան:

Վսեմաշուք Տէր,

Կայսերական կառավարութեան թուրքաստանի մէջ բամպակի մշակութեան յառաջագիտութեանը և զարգացմանը համար ՚ի զործ գրած զլուսաւոր միջոցներէն մէկը՝ տասանորդի տուրքի ժողովելուն կերպը փոխելէ և հաստատուն տուրք մի կարգադրել Կէօնի-Պի վերայ: Իստորում բամպակի հունձը առաջնահարգելի կը ժողովուի, երկրորդը կը պարտաւորեալ են, ժամանակ մի, ամեն օր և ամեն ժամարները գտնուի, սակաւ առ սակաւ հանելու համար

զբամպակը բացուած պատիճէն, այսինքն կեղեկն, քանդել եթէ հարկաւոր ժամանակէն յառաջ ժողովելու ըլլան զպատիճները, ետքէն անկարելի կը ըլլայ բամպակը զատել և մաքրել, և ընդհանրապէս եթէ հարկաւոր եղած ժամանակէն աւել յառաջները իրենց ճիւղերուն վրայ թող տրուին, բամպակը ինքնիրեն գետինը իյնալով կը փասուի:

Տասանորդի տուրքին վրայօք խօսելով որ պիտի առնուի բամպակէն, այս տուրքին հարկապահանջները ուրիշ միջոց մի չունին բայց միայն հետեւել հնձելու եղանակին զոր երկրորդը կը զործածեն, կամ վտահանալ անոնց հաւատարմութեանը և ուղղութեանը, կամ վերջապէս իւրաքանչիւր բամպակի արտի համար պահպաններ գնել ՚ի հսկողութիւն: Սակայն այս ամեն միջոցները ՚ի մասին զործագրութեան անյաղթելի դժուարութիւններ կը ներկայացնեն, ուստի այս ամեն գործնական դժուարութիւնները անհետ ընելու համար, կայսերական կառավարութիւնը որոշեց իւր ընթացքը համաձայնել օգոստոսիս Սուլթանին հրամանագրին, որուն իմաստը հետեւեալն է:

Տասանորդաց վարձակալներուն պայմանաւոր լըննալէն անմիջապէս ետքը, մերձաւոր հնձոյն տասանորդաց տուրքը՝ փոխանակ առաջուան պէս ժողովելու, հաստատուն տուրք մի սահմանելու է իւրաքանչիւր Կէօնի-Պի համար, բամպակ սերմանուած երկիրներուն վերայ: Այս տուրքը որոշելու համար վերջին վեց ամաց արտագրութիւնները իբրև հիմն ունենալու է, այսու ամենայնիւ այս տուրքը տարեկան արտագրութեան հարկերին տասը կամ տասնէն մէկը անցնելու չէ, և տասը տարի շարունակաբար պիտի գործածուի այս կարգադրութիւնը: Բամպակի մշակութեան յառաջագիտութեանը վերաբերեալ այս զլուսաւոր կարգադրութիւններէ ՚ի գատ, կայսերական կառավարութիւնը հետեւեալ արտօնութիւնները կը շնորհէ բամպակամշակ երկրագործաց:

1. Այս հրամանագրին հրատարակութեան ըսկսեալ մինչև տասը տարի, այն ամէն երկիրները որ անպործ և դատարկ մնացած են, եթէ մշակուին և պատրաստուին բամպակ սերմանելու համար, այն երկիրները, կըսեմք, անշարժ ստացուածոց վերաբերեալ հարկէն ազատ պիտի ըլլան հինգ տարի:

2. Կարձեալ այս հրամանագրին հրատարակութեան սկսեալ մինչև տասը տարի՝ այն ամեն բամպակները որ օսմանեան տէրութեանէն դուրս պիտի հանուին, միևնոյն հաստատուն մաքսը պիտի վճարեն որ սահմանուած է յառաջմանէ բուն տեղացի բամպակաց համար, ինչ տեսակ կուզէ թող ըլլայ, թէ և այս տեսակները շատ աղւորացած ըլլան:

3. Բամպակ մշակելու և մաքրելու սահմանուած ամեն մեքենաները ազատ պիտի ըլլան մաքսի տուրքէն թէ ծախու առնելու և թէ ներքին կողմը յուղարկելու ժամանակը:

4. Որովհետև կայսերական կառավարութեան ծախիքը գնոյ պիտի առնուին բամպակի մշակութեան վերաբերեալ մեքենաներ և ուրիշ գործիքներ, ինչպէս նաև բաւական քանակութեամբ պատուական տեսակ բամպակի հունտեր և երկրագործաց ձրիաբար պիտի բաժնուին որ նոյն օրինակին հետեւին, կայսերական կառավարութիւնը, կըսեմք, հոգ պիտի տանի նաև տպեալ տետրակներ բաժնելու, որոնք նոյն երկիրը խօսուած լեզուօք զրուած պիտի ըլլան և այս տետրակները պիտի ծանուցանեն թէ ինչ կերպիւ մշակելու է բամպակը և ինչ եղանակաւ գործածելու է վերոյիշեալ մեքենաները:

5. Կայսերական կառավարութիւնը կը ծանուցանէ նաև թէ որոշած է ճանապարհները շուտով յարկելու և շտկելու, որոնք մասնաւորապէս պիտի

դիւրացնեն բամպակի փոխադրութիւնը :

6. Բամպակ ելած գլխաւոր տեղուանքը տարեկան արուեստահանգէս մի պիտի ըլլայ բամպակի արտադրութեան համար . և տէրութեան կողմանէ վարձք պիտի չնորհուին այն երկրագործաց , որոնք կարող կըլլան դերագոյն տեսակ բամպակ ներկայացնելու իրենց արտերէն ելած :

7. Բամպակ արտադրող գլխաւոր քաղաքաց մէջ խառն յանձնաժողով մի պիտի հաստատուի , բաղկացեալ տեղացի և օտար անձինքներէ , որոնք տեսական և գործնական ծանօթութիւններ ունին այս նիւթի վրայօք : Այս յանձնաժողովին պարտքը պիտի ըլլայ տեղեկագրութիւններ ներկայացնել կայսերական կառավարութեանը 'ի մասին գործադրութեան օգտակար համարուած միջոցաց 'ի դարձացումն բամպակի մշակութեան :

Չեր Վ սեմութիւնը շատ աղէկ զիտէ թէ կայսերական կառավարութեան այս զանազան կարգադրութիւնները կանոնաւոր կերպիւ 'ի գործ դրուելէ ետեւ , մեծամեծ օգուտներ պիտի ծաղին անոնցմէ թէ՛ հասարակութեան համար և թէ՛ կառավարութեան համար : Այսու ամենայնիւ այս կարգադրութիւնները գործքի դրուելէ յառաջ , հարկաւոր է տեղեկութիւն տալ հասարակութեանը անոնց վրայօք՝ օսմանեան տէրութեանը մէջ զանուած զխաւոր լրագրութեանց միջոցաւ հրատարակել տարով նոյն կարգադրութիւնները . և անոնց օգտակարութիւնը հասկցնել ժողովրդոց 'ի ձեռն քաղաքական խորհրդոց իւրաքանչիւր նահանգի և մանաւանդ բամպակ արտադրող նահանգաց : Բայց որովհետեւ ձեր իրաւասութեան ներքեւ գտնուած վիճակներուն տասանորդները արդէն վաճառուած են , անկարելի է այժմ 'ի գործ դնել տասանորդը ժողովելու նոր կարգադրութիւնները . սակայն կաղաչեմք զվսեմութիւն ձեր իմացնել մեզ այն ամեն խոհական միջոցները որոնք կրնան 'ի գործ դրուել տկարացնելու համար քիչ մը զգուշաբարութիւնները զորս տասանորդապահանջութեան այժմեան կերպը յարոյց մինչև ցայսօր բամպակի մշակութեան զարգացմանը դէմ , և միանդամայն հող տանիք կարելի եղածին չափ փութով հաստատելու զյանձնաժողովը որ առաջիկայ նամակիս 7-երորդ յօդուածոյն մէջ նշանակուած է :

Այս յանձնաժողովին նախագահը ձեր վսեմութիւնը պիտի կարգէ . սակայն երկրորդ նախագահը և առաջին խորհրդով քարտուղարը յանձնաժողովոյն անդամներէն պիտի ընտրուին և պիտի կարգուին : Այս երեք անձանց պաշտօնը , նմանապէս յիշեալ յանձնաժողովին պաշտօնը պարզապէս պատուոյ պաշտօններ ըլլալով , տարեկան վարձք մի պիտի չտրուի անոնց . սակայն կայսերական կառավարութիւնը սրահ մի պիտի ցոյց տայ անոնց՝ յանձնաժողովին նիստերուն համար , և 'ի պէտս կրակի ու զրատեանակի հարկաւոր ծախքը՝ արքունի սնտուկէն պիտի ըլլան :

Հանձնաժողովը ամենէն յառաջ պէտք է որ հող տանի 'ի մասին փոխադրութեան մեքենայից , գործիքներու և բերել տալու բամպակի հունտերուն տեսակին վրայօք , մասնաւորապէս քննելով և նայելով թէ՛ որ տեսակները աւելի աղէկ կըլլան արտադրող վիճակաց երկիրներուն : Այս ամեն հարկաւոր բաները քննելէ ետեւ , յանձնաժողովը պէտք է որ իւր որոշմանց տեղեկագրութիւնը ընէ , նշանակելով անոր մէջ անունը և տեսակը նոյն մեքենայից և երկրագործական գործիքներուն , նմանապէս ծանուցանելով թէ՛ որ քաղաքներէն բերուին նէ , աւելի ձեռնառու կըլլան : Բաց յայտնանէ նշանակելու է նոյն տեղեկագրութեանը մէջ զզինը յիշեալ մեքենայից և փոխադրութեան ծախքը , նրմանապէս ուրիշ պատահական ծախքերը մինչև իրենց սահմանեալ տեղուանքը հասնելու : Այլև նշանակելու է երկրագործաց անունները , որոց արժան է յանձնել զպաշտօնը բաժնելու յիշեալ մեքենաները , գործիքները և հունտերը . նմանապէս ծանուցանելու է թէ՛ զանոնք որ քաղաքները յուրաքանչիւր աւելի օգտակար և աւելի յարմար է : Հանձնաժողովը պէտք է նաև քննէ և որոշէ թէ՛ որ քաղաքը պատշաճ է 'ի կատարել զտարեկան արուեստահանգէսը 'ի ցոյց արտադրեալ բամպակաց : Այս որովհետեւ յիշեալ յանձնաժողովին խորհրդածութիւնները և քննադատութիւնները ուրիշ նպատակ

չունին բայց միայն հասարակաց բարութիւնը , ուստի հարկաւոր է որ ամենայն պաշտութեամբ և անկախութեամբ ըլլան յիշեալ քննադատութիւնները և խորհրդածութիւնները :

Կայսերական կառավարութիւնը իմանալով թէ յիշեալ բնակիչներէն շատ պատուաւոր անձինք հարկաւոր եղած յաջողակութիւնը ունին այս յանձնաժողովին անդամ կարգուելու , անոնց ցուցակը ներկայ նամակիս մէջ ծրարեալ կըլլաւարկեմք ձեզ :

Չեր Վ սեմութիւնէն կրնադրուի որ շնորհք ընէք 'ի ժողով դումարելու դանոնք 'ի ներկայութեան ձերում . և եթէ ընդունելու ըլլան իրենց առաջարկուած պաշտօնը , հող տարէք անմիջապէս հաստատուելու զյանձնաժողովը . որուն եթէ հարկ համարուի ուրիշ անդամներ յաւելցնել , կաղաչեմք որ անոնց անունները և յատկութիւնները իմացնէք մեզ :

Բնկալարուք զյարգանս իմ , և այլն , և այլն :
2 Բեպիւլ Էվլէ 1279 , 16 օգոստոս 1862 :
Վ աճառակախութեան և հրապարակական շնորհածոց տեսուչ .

(Ստորագրեալ) : ՍԱՎՅԱԿ

Յուցակ անդամոց յանձնաժողովին , որ վերոյիշեալ պաշտօնական նամակին մէջ ծրարեալ էր :

Նիշէք—Պէյ , կայսերական գործակալ վասն քաղաքապետութեան վերաբերեալ խնդրոց :

Ռեշար—Պէյ , կայսերական գործակալ Այսրեի երկարադրոյն :

Մուքաթա Էֆենտի , երկրորդ կայսերական գործակալ Այսրեի երկարադրոյն :

Տիրան Էֆենտի , տեղական կառավարութեան քարգ : Պարուայք , Իրիզար Կասաբեգեան , Այլո Գ . Էֆենտի , Տ . Պարաճի , Հայտ Բարր , Շ . Վուրայ , Ժ . Պ . Բայ Էրսոն , Ֆ . Լաօնթրի , ձիւ Կոն , Բիրիք Կոն , Ք . Ռիզ :

Նահանգիս ընդհանուր կառավարիչ վսեմափայլ Մէհմեթ Վէլիաֆաշան՝ վերոյիշեալ պաշտօնական նամակը ընդունելէ ետեւ , փութացաւ 'ի ժողով հրաւիրել 'ի ներկայութեան իւրումայն ամեն անձինքը որ վսեմափայլ Սաֆֆեթ Էֆենտիին նամակին մէջ նշանակուած էին , և իմացուց անոնց Բարձրագոյն Գրան Եւաջարիւթիւնը : Ընկերքն ալ սիրով ընդունելցան իրենց յանձնուած պաշտօնը և Բէշտա֊Պէյը՝ ըստ անօրէնութեան մեր ընդհանուր Կառավարչին , առժամանակեայ կերպիւ նախագահ անուանեցաւ այսնորահաստատ յանձնաժողովին :

Քանի մը օրէ ետեւ յիշեալ յանձնաժողովին անդամները վերստին գումարուեցան մասնաւոր տեղ մը . ուր վաճառականութեան պաշտօնէն գրած նամակը հրապարակու կարգացուելէ ետեւ , միտար Հայտ Բարրը՝ երկրորդ նախագահ կարգեցաւ և Պոզոս Էֆենտին առաջին խորհրդոց քարտուղար անուանեցաւ յանձնաժողովին ընտրութեամբը :

Ե Ր Գ Ե Յ Ի Ն

Կըլսեմք թէ Կոստանդնուպոլսոյ Մի-նաթի Էն-ճի-ա լրագրին խմբագիր յարոյ պարոն Կարապետ Բանտեանը՝ 21 օր ստիկանութեան բանար մնալէ ետեւ , վերջապէս արձակուեցաւ , իւր լրագրին հրատարակութիւնը խափանուելով և 20 օսմանեան լրատուգանք վճարելով :

Կըհաստատեն թէ Մի-նաթի Էն-ճի-ա լրագրին 213 , 214 և 215 թուոց մէջ հրատարակուած անխոհեմ յօդուածոց պատճառաւ է որ պարոն Բանտեանը այս կերպիւ դատաւարուեցաւ :

Կոստանդնուպոլսոյ Մի-նաթի լրագրին օգոստոսի 25 թուոց մէջ ազգային պաշտօնական յայտարարութիւններ հրատարակուած են : Այս յայտարարութիւններէն հետեւեալ յօդուածը արժան կըհամարուի մեր յարոյ ընթերցողաց առջև դնել :

Արարտեան Սերովի վարդապետին դէմ Միլլու հանդէսին 1584 թուոց մէջ գրուած ծանր ամբաստանութեան վրայ , խառն ժողովը ստանձին քննութիւններ ընկնելու գաւ կրօնական մասնաժողով մը կազմեց , և յիշեալ հանդէսին խմբագիր Սըվաճեան Պ . Յարութիւնը դատաստանի հրաւիրեց որ լրած ամբաստանութիւնը հաստատէ :

Այս դատը քանի մը ամիս տեւելէն ետեւ վախճան առաւ : Պ . Սըվաճեանը իր ամբաստանութիւնը չկրցաւ ստուգել , որուն պաշտպանութեան համար Պարուատ ժամկոչի մը ամբաստանական նամակը մէջ բերաւ : Այս նամակը բողոքովին շինու և անհիմն ըլլալը հաստատուեցաւ . ըստարու՛մ Պարուատ ժամկոչը քանիցս անգամ հարցուտարած ըլլալով՝ լարը սրբապաշտեց յայտնեց , որ Սերովին մէջ նշանակուած նամակին նիւթը լրջ չէ , այլ միայն ստորագրութիւնը , զոր ունեւք ճիշտի թղթի մը վրայ բռնի և քանի մը օակի լրեն տալով դիւր տուեր են . և յետոյ կերել թէ ճիշտակ թուղթը ըստ քանց սյուղով ամբաստանութեամբ լեցուցիւր են :

Նոր Սերովին կրպնդել թէ իր լրածը և գրածը սուտ չլրնար ըլլալ , և թէ գործը ամենայն պարտութեամբ կատարելու համար վկաններ ունի Պարուատ ժամկոչին վերջութեան ստուգելու կրեան հանելու . խառն ժողովը դատին կրպնդ քննութիւնը քահանայական ժողովին յանձնեց :

Ահա տակ յիշեալ ժողովին և կրօնական մասնաժողովին խորհած տեղեկագիրը .

Առաքելաճորտ սրբապետ Հայր .

Չեր անօրէնութեան համեմատ այսօր բաւական ազատեցինք Սերովին բերել վրաները բերու . բայց մինչև ժամը ինը բնաւ չերեկցաւ , և մեզ ու արժանապատիւ Կերպէս վարդապետն անօրուտ տեղը սպասել տուաւ : Վ անորոյ ժողովն Սերովին հրատարակած անտեղի յօդուածները ընդգէմ Սերովի վարդապետին ըստ նախորդ քննութեանց պարտութիւն ճանչնալ կըհամոզուի , և թշնամոյց անարգութիւն :

Ուստի Չեր բարձր Սրբապետութեան կըթարմար սրձամը անօրինիլ :

Միտար և այլն : (Ստորագրութիւն)
19 Յուլիս 1862 Ստեփանակո

Ղարաթիւս : Յօնանեկս քահանայ Փափագեան :

Այս տեղեկագրին վրայ Խառն ժողովը կրպնդ և կրպնդ հրաւիրեց զՍերովին և իր վկանները ներկայանալու , որ պէտքի յետոյ բողոքելու տեղի չունենայ . բայց որովհետեւ երկուք չեղաւ , և վրայք խառնութեամբ են սյլ և այլ տեղեր , որ իրենք Արարտեան Սերովի վարդապետին դէմ եղած ամբաստանութեան մասին յարաւրերութիւն մը չունին , խառն ժողովը կրօնականաց վճռոյն վրայ յիշեալ վարդապետը անպարտ հրատարակեց , և անոր վրայ եղած տարածանքութիւնը տի գործ պարտութիւն :

Հաճախե՛ք Ռո-տիլ լրագրին սեպտեմբերի 1 թուոց մէջ հետեւեալ յօդուածը կըլրագրամք :

Մեր Ռուսիական ազգայնոց մէջ քանի մի ժամանակ է , որ սովորութիւն է եղած նամակներ շարադրել լրջ թէ 'ի զխնայ բոլոր ազգայնոց , ստանէ տուն չըջնցնելով ստորագրել տալ ոյն նամակները թէ կամեաւորապէս և թէ սովորաբար սյուղով անձանց : Այլ նամակներ ըստ վանդակութեանը լինում է ըստ մեծի մասին կամ բողոք (զակզաս) այս ինչ կոչակապտի կամ վարդապետի վրայ և կամ պաշտպանութիւն այս ինչ քահանայի , ուսումնականի , վարժապետի , և այլն :

Պաշտպանութիւնն սրկից մարդոց կամ բողոք որ և իցի ազգայնաց գործի համար , և թէ արդար է և բարի կրտսերութեամբ , յայտ է թէ զավելի բան է : Իսկ եթէ ընդհակառակն՝ անարդար է և զի պարտութեամբ , այն ժամանակ կարող է լինել այն՝ ոչ միայն անօրուտ , այլև ազգայնաց : Մասնաւոր եթէ 'ի մի տանուք այն միջոցներն՝ որ 'ի գործ են գրուում այդ նամակները այլոց ստորագրել տալու . ժամանակ , ևս և այն՝ որ այն պաշտպանութիւնին կամ բողոքին լինելով շատ անգամ ձայն միայն մի կամ երկու մարդոց՝ ստանում են տեղի ընդարձակ կերպարանք , որպէս ձայն բողոք սոցիալ , պատճառ , որ շատերն ստորագրած են իւրեանց անունը նոյն թղթի երկ օակին , անանք աւ շնորհակա (խաթիլի համար) ամանք աւ երկուցի , և անանք ևս ցանկալի կամ դատելու իւրեանց անձը այնպիսի կերպի մարդոց կարգում՝ որք ազգայնք են , աղբի վերայ մտածող են : Այս օրը բարձր անում են նորա շատ անգամ ոչինչ տեղեկութիւն չունենալով ոչ այն խնդրին և ոչ այն գործին , որոց մասին գրուած են նամակներն :

Թէ ինչպէս են լինում այդ ստորագրութիւններ , բայց ցարեւեր փոքր մի : Ասեմք թէ մի մարդ մտադիր է եղած այնպիսի մի նամակ ստորագրել տալու . նա հայկերոյթ է պատրաստում իւր տանը (շատ անգամ և սրանդոնեւրում) . հաւարուում են նորա մօտ շատ անձինք , սկսում են ուտել , խմել , ուրախանալ , զուարճանալ , թուղթի խաղալ , և այլն : Տանուակը կամ նորա բողոքիմտոց մի-

նր, որ յանձն է առած ստորագրել տալ նամակը՝ սկսում է գանազան խորքերով յորդորել զամենքը ստորագրելու պատրաստուած նամակը, որ կրէր չէ կարգապետում, ասելով՝ թէ ոգտաւէտ բանի համար է զրուած . . . այս ևս յաւելցանելով թէ ո՞վ որ ստորագրէ՞ փող վճարելու չէ: Ար տեղ փողի բան չկայ, ասելով փարենթազրիսի մէջ, այն տեղ Հայր պատրաստ է ամենայն յօժարութեամբ գործ կատարելու: Ամենք խորին ամենուտեքի կամքը կատարելու համար ստորագրում են, և ամենք թէ և հրատարակում են, բայց նոյն ևս հարկադրում են ստորագրողին ասելով թէ անպատճառ դժուար ևս պիտի ստորագրէր, իսկ ձեռագրելի փող չենք ուզում. եթէ չըստորագրէր՝ կխոսվէր ձեզ հետ, այսուհետեւ ո՞չ մի գործ չենք ունենալ ձեզ հետ, և այլն և այլն: Ա կրկնապէս նորա ևս անձարայտալ՝ ակամայ կամք՝ ստորագրում են: Այսպէս ստորագրողաց թիւն հասանում է մէկ երկուսից, մինչև տասը, տասնեօթը, հարիւր, և այլն:

Այժմ կարծում են ողորմելիքն թէ այն Աստանն, որում նորա ուղարկում են իւրեանց բողոքողիքը կամ ջատագովական թուղթը, ստորագրողաց թուոյն նայելով պիտի վճիռ տայ, շատ և շատ սխալում են: Այնպիսի նոյն աստանն, որպէս և իւրարմանչիւր մտացի բարեխորտ և ուղղապատ մարդ, քաջ գլուխ, որ աշխարհիս կրեւտում, մեր և իջէ, և բլր և իջէ, կարող են մարդիկ՝ իւրեանց կուսակիցներ, պաշտարաններ, հետևողներ ունենալ, և գովարանողներ ևս գտանել, ո՞չ մի այն լաւ գործոց համար, այլ և շար և փնտաւար գործոց կամ դիտարութեանց համար, որպէս գտանում էին և գտանում են ազանգաճառ մտորեցողիքէք Քրիստոսն յառաջ, և Քրիստոսն հետոյ, մինչև մեր օրերը: Արեւն զարծեալ կրկնում ենք, սխալում են և ՚ի գործ են աշխատում նորա, որք ասիւր են ՚ի զինաց հասարակութեան կամ բոլոր ժողովրդի այս կամ այն քաղաքի, թղթեր շարադրել և ավիւրեմբ ստորագրել տալով, յոսով խորել սրղարադատ աստանները, և ստանալ իւրեանց սրտին հաճոյական կղած վճիւր. ըստորում ի մատուց գատարող չեն բուսակոտորում միայն ստորագրող անձանց շատ կամ սակաւ թուով, այլ միշտ նայում են թէ ո՞չք են ստորագրող անձները, թէ կա՞ն իրօք նորա և եթէ կան՝ որ կարգի և ի՞նչ խելքի տեք մարդիկ են, և այլն, և ասպ ամենայն զղուշութեամբ ուղղիք լինելով զրուածներ ի բովանդակութեամբ կիսկին քննել, դատել և արդարապէս վճուել հերքելով կամ հաստատելով առաջարկուած խնդիրը:

Այլ ընթերցողք, ասացիք խնդրեմ, այս ի՞նչ յառաջակում թիւն է, այս ո՞րպիսի լուսաօրութեան գալարար է, որ մտած է մեր ազգայնոց մէջ: Յաւելով ցաւում ենք այսպիսի գործոց վերայ, որք պատահում են մեր ազգի մէջ, և մանաւանդ այն բանի վերայ, որ բանի մի ըրձակատար անձինք իւրեանց զազանի նոյա տակներին հասանելու համար, այսպիսի անարժան և պախարակիչի միջոցներ ՚ի գործ գնելով մարդեցոյցանում են պարզավա մարդիկը:

Թեոքոսիայէն Յունիսի 25էն կրգրեն:

Նալըանդեան Մերայէլն, զորմէ քան ընկեր թէ ընկալեալ է ՚ի Հնդկիս զհրեաական մնացեալ յօգուտ Նախիջևանի, գնացեալէր՝ որպէս գիտեք՝ ՚ի Անտոն: Ի 10 ամսոյս դառնայ ՚ի Նախիջևան, բերելով ընդ իւր զարծաթն, որ պէս ասեն, փոխեալ ՚ի մուրհակս դրամատան Առգիւց: Այլ ՚ի 24 սորին, հասանէ յանկարծ ՚ի քաղաք անդր զինուորական ոմն սպայ հանդերձ երկու զօրականօք, ասենու ընդ իւր ՚ի դատարանէ տեղոյն երկուս գատուօքս, գնայ գէպուղից ՚ի տուն Նալըանդեանին, ՚ի զիւր անցուցանէ զամենայն գրուածս զսրս գտանէ, գնեղնոսին յարկի մի և կնքէ և առաքէ ՚ի Փեղբուպուրի: Եւ ինքն առեալ ընդ իւր զնա ինքն ըզՆալըանդեանն, գնայ գէպուղից ՚ի մայրաքաղաք անդր: Պատճառք յանկարծադեպ իրացս անյայտ են մեզ և ամենեցուն. բայց զինչ և իցէ, Նախիջևանցիք տագնապեալ են յոյժ ընդ եղբարն, որպէս կարող էք գուշակելու:

Ահա փայլ սրբազնասուրբ տէր Մատթէոս Աստուածապալա կաթողիկոսը Մայիսի 27էն ՚ի վեր Տփլիսի կրգանուի. ուր իւր սովորական ազգասիրութեամբը կաշխատի ամենայն ջանիւք սերը և միաբանութիւնը հիմնաւոր կերպիւ հաստատելու յիշեալ քաղաքին Հայ ժողովրդը:

գեան մէջ և հարկաւոր եղած բարեկարգութիւնները տնօրինել յառաջադիմութիւն և ՚ի բարորութիւն Աղբիս:

Մոսկուայէն կրգրեն թէ պարոն Օարմայրն, որդի Օմիււնայի Մսերայ Մսերեանց մագիստրոսի, բարձրագոյն հրամանաւ ամբարձաւ յաստիճան թիթուլեարնի Սովետնիկի:

Արժան կըհամարիմք ծանուցանել թէ յիշեալ պարոն Օարմայրն Մսերեանց ուսումնական աշխիւ երկասարգ մըն է. որ Մոսկուայի տպարանոց, փնտապարանոց և այլ այս օրինակ գործատանց տեսուչ կարգուած է և միանգամայն Ասուրցի է Ազգայնացի ձեմարանին մէջ: Իսց յայտանէ, յայտնի է որ պատուելի պարոն Օարմայրն Համբաւաբեր Ռուսոյ հայերէն լրագրոյն խմբագրիչն է. որ անցեալ տարիէ հետ կըհրատարակուի ՚ի Մոսկուա:

ՔՐԻՍՏՈՍԱՊՍՏՈՒՄ

Աւետարանական պատմութեան համառօտութիւնն է հանդերձ ծանօթութեամբք, աշխատասիրեալ յարժանապատիւ պարոն Մսերեանց Մսերեանց Մագիստրոսէ, ՚ի կրօնուսոյց վարժապետէ Ազգայնացի ձեմարանին որ ՚ի Մոսկուա: Հարց պատասխանիով շարագրեալ և Մոսկուա տպեալ շատ օգտակար գրքոյի մըն է թէ տղայոց և թէ չափահաս անձանց համար:

ՉԵՓԻՒՌ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Հնգե տասանօրեայ նոր հանդէս մըն է. որ անցեալ ամսոյն 15էն սկսաւ հրատարակուիլ ՚ի կոստանդնուպոլիս, խմբագրութեամբ յարգոյ պարոն Միլիտի Մ. Հայի Վափամաճեան: Այս ուսումնական երկատարող կըխոստանայ, իւր կարողութեան չափով աշխատիլ ՚ի նպատ իմացական և բարոյական յառաջադիմութեան աղբիս. ուստի անոր եռանդուն ջանքը, և թէ իսհամութեամբ ՚ի գործ գնելու ըլլայ, անտարակոյս քաջալերութեան արժանի է:

Վեցամեայ շրջանին արժէքն է 40 դուրուշ կանխիկ վճարելի:

ԳԱՍՍԳԻՐԲ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏՊԵԱԼ Ի Կ. ՊՈԼԻՍ

Այս պատուական գրքուկին հեղինակն է յարգոյ պարոն Ստեփան Պ. Պ. Փափաղեանց կոստանդնուպոլսցի. որ աշխարհաբար լեզուաւ և համառօտիւ յառաջ կըբերէ ազգային հին պատմութիւնը, հանդերձ յիշատակութեամբ ժամանակակից անցից սմանց:

Կրկնաձառի ՚ի Կ. Պոլիս, Ղալաթիոյ Հայոց վարժարանը ՚ի գին 12 դուրուշի:

ՄԻՒՂԹԻՒՆԻ ՍԷՎ

Մօտերո՞ այս վերնագրով տնօրակ մի հրատարակուեցաւ հայերէն տառերով և տաճկերէն զիւրիմանակ լեզուաւ:

Այս տնօրակին հեղինակն է մեծարգոյ Յովհաննէս ազա Ս. Բիւրքճեանօք, որուն ազգասիրական և ուսումնասիրական ջանքը յայտնի է ամենուն և գովութեամբ կը յիշատակուի միշտ Հայ լրագրութեանց մէջ:

Աւելորդ կըհամարիմք յիշեալ պատուական տնօրակին վերայք բացատրութիւններ տալ. քանզի իւր վերնագիրը բաւականապէս կը յայտնէ թէ ազգասիրութեան վերաբերեալ յորդորական ձառ մըն է, միայն արժան կըհամարիմք ծանուցանելու թէ մեծարգոյ հեղինակը այս տնօրակը իւր ծախքովը տպիւ տալով՝ ձրիաբար բաժնէլ տուաւ թուրքաւասանի հայաբնակ գրեթէ ամեն քաղաքացի մէջ հասարակութեան ազգասիրական զգացմունքը, զարթուցանելու համար:

Մաթեոյ Ալանայն Յունիսի 15 տնօրակին կիմանալք, որ Նախիջևանի և Պեսարապոլիոյ բարեխնամ առաջնորդ գերապատիւ տէր Վաբընէլ յվաղեան գիտնական վարդապետը Մայիսի 30ին ձանապարհ ելեր է Թեոքոսիայէն դէպ ՚ի Նախիջևան, ընկերութեամբ Ա. Լըմանճի Սի:

Նօզին Փորթուրք մեծարգոյ աղա Յովհաննէսի Նապեան Մերաբեանց, որ երկու շաբաթէ ՚ի վեր այն կողմերը կրգանուէր:

Յունիսի Յին, գերապատիւ Առաջնորդը համար է ՚ի Նախիջևան. ուր փառաւոր հանդիսութեան մայր եկեղեցին գացեր է և բեմն ելելով համառօտ և սիրայորդոր ատենաբանութիւն մի քերէր է, և ասպ ներկայ դտնուէր է սուրբ պատարագին:

Մաթեոյ Ալանայն հետեւեալ կերպիւ կըլրացրեն գերապատիւ Վաբընէլ վարդապետին ՚ի Նախիջևան ըրած այցելութեան պատմութիւնը:

Մուր պատարագին վերջը Առաջնորդը դնայ իրեն և Փորթուրքին համար պատրաստուած իջևանը. ուր նիկոյայան իրենց դարձեալ իշխանաօրք և ամենայն եկեղեցականք:

Երկրորդ օրը և միւս օրերը՝ մինչև ձանապարհ ելածին, որ յունիսի 25ին եղաւ, Առաջնորդը իւր այցելութեան պարագիւրը կատարելու Նախիջևան քաղաքին ու գեղերուն մէջ: Այս նախ տեղոյն հոգեւորական կառավարութեանը մէջ եղած գործերը սուրտեց՝ համաձայն կանոնաց Հայաստանեացի եկեղեցոյ և կայսերազէր օրինաց: Երկրորդ, թէ մի առ մի և թէ իմասին կանչեց քանի մը անգամ քահանաներն ու դպիրները, և հարկաւոր ձանցյաձ աղբարարութիւններն ըրաւ անոնց իրենց եկեղեցական սուրբ աստիճանին պահանջած պարտքերը աւելի ճշգրութեամբ և հաւատարմութեամբ կատարելու: Երրորդ, Նախիջևանի մէջ տարւոյս ըսկղղին բացուած եկեղեցական փոքր դպրոցին այցելութիւն ըրաւ, և անոր ներքին և արտաքին պիտոյքը հոգալու համար պէտք եղածը կարգադրեց: Չորրորդ, քաղաքին և գեղերուն եկեղեցեաց նորոգութեան կարօտ տեղերը անձամբ տեսնելով ու ստուգելով՝ հրաման տուաւ երէցփոխանաց որ ձեռք զարնեն այն նորոգութեանց: Յունիսի 17ին անձամբ դնայ Ս. Խաչ վանքը, որ քաղաքին 7 վերսթ (երկու մղնի չափ) հեռու է, և հետը գտնուած իշխանաօրները յորդոցեց որ վանքի եկեղեցոյն հիմնական նորոգութեանը համար հարկաւոր եղած տուրքն չբաշտին. նորա ալ իսկոյն ստորագրութիւն մը բացին, և զարմանալի եռանդով գրուեցան. ու մանք 50, տանք 100, ոմանք 200, և ոմանք մինչև 1000 ու 1200 լուպի արծաթ, սրով այն օրուան գումարն եղաւ 6000 լուպի, և հոգաբարձուներ որոշուեցան եւ կեղեցին նորոգելու, այս ամսա նվթերը պատրաստելով:

Նախիջևանի ժողովրդեան դովիլի փափաքներէն մէկն ալ այս էր երկու երեք տարուանէ ՚ի վեր՝ որ մեծ դպրոց մի աննանն բաւական բարձր և հարկաւոր ուսմանց՝ այն դպրոցին կարգադրութիւնն ու դիմաւոր կառավարութիւնը Առաջնորդին ձեռքը լինի, և Նախիջևանի եկեղեցեաց գումարներէն մէկ մաս մըն ալ զորձածուի այն դպրոցին մէջ ազբատ աշակերտներ դաստիարակելու: Առաջնորդը արդէն պտորաստած էր այնպիսի դպրոցի մը հիմնարկութեան և կարգադրութեան նախադիմը, որոյ մէջ 400 աշակերտք պիտի կարողանան սովորիլ շորս հինգ տարի այն ամենայն ուսմանքն որ հարկաւոր են աւելի վաճառակամութեան հետ եղող ժողովրդոց, 500ը շափաւոր տուրք մը վճարելով՝ իրենց կարողութեանը համեմատ, և 100ը եկեղեցական փողերով: Խօսեցաւ Նախիջևանի մեծարոյ քաղաքապետոյն և զվսաւոր իշխանաւորացը հետ, հասկըցոյց նոյա իւր դիտարարութիւնը: Եւ յետոյ՝ 200ին աւելի ժողովրդականաց առջևը պարզեց իւր առաջարկութիւնը. և թէ պէտ ամենքն ալ յօժարակամ սիրով ընդունեցան Առաջնորդին առաջարկութիւնը, բայց վախ մը ցուցնելով որ սի գուցէ դպրոցին ծախքը հանելու չափ փող չկարենայ հաւաքել թոշակաւոր տղայոց վճարելու գումարներովը, ժամանակ խնդրեցին իրենց մէջ խորհելու և խօսելու այս հարկաւոր նվթիւ միտց: Առաջնորդը երկարօրէն բացատրեց և հասկըցոյց ժողովակա նոյց որ եթէ միաբան և միախրտ լինին իրենց մէջ, ամենին տարաբոյս չկայ այն դպրոցին ամենայն յաջողութեամբ սկսելուն և ստաջ կրթալուն, և թէ ինքը յանձն առած է յապիւր Աստուծով այն ամենայն զլծուարութեանց որ այսպիսի ձեռնարկութեան դէմ կրնան ելնել. միայն թէ միաբանութեան հողին տիրէ և հաստատուի իրենց մէջ: Ժողովուրդն ալ յուսաւով որ թիժ ժամանակին կատարուի թէ իրենց և թէ Առաջնորդին փափաքը, արձկուեցան:

Յունիսի 18ին դնայ Առաջնորդը Նախիջևանի հինգ դեղեր քաղեց, որոց երեքին մէջ նոր եկեղեցիք կընուուն, և 20ին սուսուտը մայր եկեղեցոյն մէջ հաւաքուած ժողովրդեան համառօտ քարոզ մը տալէն ետև:

